ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

ՁՅՈՒՆ Է ԳԱԼԻՍ

1

Ձյուն է գալիս Երևանի վրա՝ խոշոր, փափուկ ձյուն...

Քիչ առաջ, երբ մարդիկ դուրս ելան իրենց աշխատավայրերից՝ այն դեռ չկար: Եվ հանկարծ, միանգամից, սկսվեց: Տրամվայներում, տրոլեյբուսներում, ավտոբուսներում, մարդիկ ժպտերես նայեցին ապակիներից դուրս և շշնջացին իրար.

— Ձյուն է գալիս…

«Ձյուն է գալիս...»— լսվում էր հազարավոր շուրթերով կրկնվող նորությունը, կարծես առանց այդ էլ ակնհայտ չէր, որ ձյուն է գալիս Երևանի վրա՝ խոշոր, փափուկ ձյուն:

Ձյունը գալիս էր բամբակի գուղձերի չափ մեծ փաթիլներով, խիտ, շտապ: Եվ այնքան լուռ, որ մարդիկ իրենք ևս անցան շշուկի՝ չխախտելու համար խաղաղությունը:

Ձյունը գալիս էր այնքա՜ն առատ, այնքա՜ն շռայլ: Փողոցների ամբողջ խորությունը բարձր շենքերի վերին հարկերի մոտից մինչև սալահատակ, շարժման մեջ էր՝ անթիվ-անհամար սպիտակ շարժումներով: Մարդիկ, առարկաները, շենքերը երևում էին ընդհատ կտորներով, կարծես մեկը վերցրել էր մի մեծ ռետին և խոշոր շարժումներով քսմսելով թղթի վրա, բազմաթիվ տեղերով ջնջոտել էր նկարված պատկերը:

Ամենազարմանալին այն էր, որ թափվող միլիոնավոր փաթիլները, ընկնելով գետին, չէին արձակում ոչ մի հնչյուն՝ ոչ առանձին-առանձին և ոչ էլ մինչև անգամ բոլորը միասին: Դրանք չէին փշրվում կամ գոնե տափակում, այլ նույնությամբ հանգիստ նստում էին արդեն այնտեղ գտնվող փաթիլների վրա, այնքան հանգիստ, որ չէիր նկատում՝ նստեցի՞ն արդեն, թե՞ դեռ տեղ չեն հասել:

Իհարկե, առաջին փաթիլներն իսկույն հալչեցին տաք ասֆալտի վրա, հալչեցին նաև հաջորդ փաթիլները՝ մի քանի րոպե շարունակ: Բայց, վերջապես, ձյունը հաղթեց և այժմ գետինն սպիտակ էր, համատարածորեն սպիտակ:

Իսկ վերևից, անընդհատ և անընդհատ, միևնույն արագությամբ և առատությամբ, ձյունը շարունակում էր իջնել և իջնել և իջնել…

Հարավային քաղաքում ձյունը նման էր հյուսիսային քաղաքներից եկած շքեղ հյուրախաղի՝ համերգի պես մի բան: Բայց անցան րոպեներ և այժմ սկսեց թվալ, թե քաղաքն ինքն էր փոխել իր ջերմության գոտին, ինչ-որ հրաշքով փոխադրվել հյուսիսային մի վայր:

Արդեն ավարտվում էր դեկտեմբերը, իսկ ձյուն դեռ չկար: Ճիշտ է, եկել էր երկու թե երեք անգամ, բայց եկել էր գիշերով, առավոտյան կողմ, քիչ, և հալչել էր արևի հենց առաջին ճառագայթների հետ:

Իսկ այժմ ձյունը գալիս էր երեկոյան կողմ, և դատելով դրա առատությունից և անփոփոխ ընթացքից, գալու էր ամբողջ գիշերը:

Դեռ այսօր առավոտյան արև էր, հարավ: Գուցե այդպես լինի նաև վաղը, և հավանական է, որ լինի: Բայց ինչո՞ւ մտածել վաղվա մասին հիմա, այս րոպեիս, երբ այնքա՛ն գեղեցիկ, երբ այնքա՛ն խոշոր, երբ այնքա՛ն փափուկ, ձյուն է գալիս Երևանի վրա…

Որպես խաղաղ խնդություն՝

Ձյուն է գալիս, ձյուն…

Նո՞ր հնարեցին այդ երկտողը, թե՞ վաղուց հնարված և արևոտ ժամանակ մոռացության տրված, վերհիշեցին հիմա: Իրար փոխանցելո՞վ, թե՞ ինքնաբերաբար, բոլոր մայթերի վրա, մինչև իսկ ամենա-ոչ-ռոմանտիկները, սկսեցին կրկնել կիսաձայն կամ մտքի մեջ.

Որպես խաղաղ խնդություն՝

Ձյուն է գալիս, ձյուն..

Ձյունով ավելի երկար զմայլվելու համար կատարած առաջին դանդաղ քայլերից հետո մարդիկ հանկարծ արագացրին իրենց ընթացքը: Հարկավոր է շտապ հասնել տուն, պահված տեղերից հանել անգործությունից տխրած գույնզգույն սահնակները և, տաք հագցնելով փոքր երեխաներին, դուրս բերել ման ածելու՝ քանի դեռ չի եկել նրանց քնելու ժամանակը:

Հասնելով տուն և դեռ չփոխելով իրենց հագուստները, դեռ չճաշելով, նրանք սահնակների վրա նստեցրին հաստ հագուստների մեջ քոթոթների պես կլորացած երեխաներին և բերեցին փողոց: Ցուրտ չէր, կարելի էր հագցնել ավելի թեթև, բայց թող ամեն ինչ լինի այնպես, ինչպես հյուսիսային ձնառատ և ցուրտ քաղաքներում:

Բռնելով սահնակների առջևից կապած կարճ պարաններից, ծնողներն սկսեցին ձգել սահնակները: Երեխաները ծիծաղում և բացականչում էին հազվադեպ հաճույքից, ծնողները ձգում և ձգում էին ձյան վրա թեթևությամբ սահող, առանց այն էլ թեթև և այնքան սիրելի իրենց բեռը: Իսկ երեխաների տաք գլխարկների և հագուստների, ծնողների ուսերի և հոնքերի վրա իջնում և իջնում էր ձյունը:

Հատկապես բազմամարդ էին թեք ու դիք փողոցները: Ձյունն այնտեղ այլևս կուսական չէր՝ միայն տեղ-տեղ խոր ու փայլուն ակոսներով գծված, այլ ամբողջովին պնդացել և փայլունացել էր բազմաթիվ սահնակների անընդհատ վազքերից: Ներքևից ծնողներն այլևս դժվարությամբ էին ձգում սահնակները փողոցն ի վեր, բայց ոչ թե ծանրության պատճառով, այլ որովհետև շուրջն ամեն տեղ ձյունը ողորկ էր և սայթաքուն: Սկսեցին բարձրանալ մայթերով, սակայն մայթերը նույնպես, շուտով վերածվեցին ափսեի հախճապակու:

Ծնողներից ոմանք, առավել համարձակները, երեխաներին բազմաթիվ նախազգուշացումներ անելուց հետո, ազատ բաց էին թողնում սահնակները լանջն ի վար, ապա, հիշելով իրենց մանկությունը, սղղալով հասնում էին նրանց ետևից:

Հասնելով ներքև, նրանք այնտեղ տեսնում էին նորանոր մարդկանց, ովքեր, նորանոր սահնակների լծված, իրենց հարթ փողոցներից երեխաներին բերում էին այդ թեք ու դիք փողոցները՝ այդտեղ սահեցնելու համար: Եվ որպես նորություն, լուրեր էին բերում այն մասին, որ ձյունը գալիս է նաև նրանց փողոցներում, բոլոր փողոցներում, ամբողջ քաղաքում:

Որպես խաղաղ խնդություն՝

Ձյուն է գալիս, ձյուն…

Երեկոն բոլորովին մթնեց: Այժմ չէր կարելի տեսնել՝ շարունակվո՞ւմ էր ձյունն արդյոք, թե՞ ընդհատվել էր: Բայց մարդկանց օձիքների և ուսերի վրա դիզվում էին փաթիլները և մարդիկ եզրակացնում էին, որ ձյունը գալիս էր և գալիս էր և գալիս…

Երեխաների զվարթ ճիչերը դարձան կցկտուր և սակավ: Նրանցից ոմանք մինչև իսկ քնեցին սահնակների վրա: Ուրեմն բավական է, պետք է վերադառնալ տուն: Ձյունը գուցե մնա նաև վաղը, գուցե գա էլի և մնա ամբողջ ձմեռը՝ ինչպես դա լինում է երբեմն, մի քանի տարին մի անգամ: Բայց գուցե — և դա ավելի հավանական է — վաղը առավոտյան, արևի ծագելուց հետո, հալչի և կեղտոտ շիլայի վերածվի, հոսի թեք ու դիք փողոցներն ի վար: Ուրեմն թող այս անբիծ և սքանչելի ձյունը՝ օդում հարաշարժ և գետնի վրա համատարած, այդպես էլ մնա քնած երեխաների մտապատկերների մեջ: Հանգիստ քուն ձեզ՝ թարմ օդից թարմացած կարմրայտ երեխաներ, հանգիստ քուն և ձյան շարունակությունը՝ ձեր երազների մեջ…

2

Փողոցներում վառվեցին լույսերը: Բնակարաններում դրանք վառ էին դեռ ավելի առաջ: Մութն էին միայն լուսամուտներն այն սենյակների, որտեղ, անշուշտ, այժմ քնած էին սահնակներով սահելուց կշտացած երեխաները:

Բայց քնա՞ծ էին արդյոք: Թվում էր, թե նրանք չէին էլ հեռացել փողոցներից, այլ մեծացել էին մի ժամում, դարձել դպրոցական հասակի երեխաներ, և այժմ նրանք էին դարձյալ, որ զբաղեցրել էին թեք ու դիք փողոցների հղկված, համարյա սառույցի վերածված մակերեսը: Այժմ նրանք ոչ միայն սահնակներով էին, այլև չմուշկներով:

Բարձր սյուների վրա ամրացված լամպիոններից, ինչպես վար կործած նեղ ու երկար տաշտակներից, թափվում էր լույսը: Եվ այդ լույսի մեջ իջնում և իջնում էր ձյունը: Ձյան սպիտակությունից անդրադարձած, այժմ լույսն ավելի էր ողողել փողոցները, քան նախորդ երեկոներին:

Բայց լույսը, որքան էլ որ առատ, համատարած չէր: Փողոցը տեղ-տեղ մութն է և թվում էր, թե այդ տեղերում անշարժություն է օդի մեջ, ձյուն չի գալիս և չի իջնում ներքև: Կարծես մեկը վերցրել էր թանաքը և թափել թղթի վրա՝ տեղ-տեղ սևացնելով նկարված պատկերը:

Այժմ սահնակները մեծ էին և դրանց վրա հաճախ նստած էին երկուական երեխա՝ ոտքերն առաջ մեկնած: Ետևից սլացող որևէ սահնակ երբեմն խփվում էր առջևիններին և երկու սահնակներում նստած երեխաներն էլ ծիծաղում էին: Երբեմն մի սահնակ շուռ էր գալիս և ընկածները նույնպես ծիծաղում էին: Բացականչություններ, զվարթ ճիչեր, ոգևորված խոսակցություններ՝ բռնել էին ամբողջ լանջը:

Ձգելով սահնակներն իրենց ետևից, երեխաները դանդաղ և երկար բարձրանում էին լանջն ի վեր, որպեսզի նորից, մի քանի վայրկյանով, ճաշակեին սրընթաց վար սլանալու հաճույքը: Բայց դա այնպիսի հաճույք էր, որն արժեր դանդաղ ու երկար վերելքը:

Փողոցի ներքևում երևաց մի փոքրիկ բեռնատար մեքենա: Մի քանի երեխաներ, չմուշկներով, կառչեցին դրա թափքի կողերից և հետը բարձրացան լանջն ի վեր: Վերևում պոկվելով մեքենայից, նրանք չշտապեցին սահել ներքև, այլ մի պահ նախանձով նայեցին դրա ետևից: Մեքենայի կաբինի կտուրի վրա, հաստ շերտով, դիզվել էր ձյունը, հին ձյունը: Մեքենան եկել էր Հայաստանի լեռնային շրջաններից: Ու թեև այդ փողոցում նա անցել էր վարից վեր, բայց քաղաք նա եկել էր վերից վար՝ Սևանից Երևան: Արդեն մեկ և կես ամիս էր, ինչ խոր ձյուն էր լեռնային Հայաստանում: Բավական է՝

նստել գնացք և բարձրանալ Երևանի ետևում կանգնած բարձրավանդակը, գնալ այդտեղով ոչ-շատ, մի կես ժամվա ճանապարհ, որպեսզի հայտնվես խոր ձմեռվա ծոցում: Այդպես էլ վարվում էին դահուկավորները, այն երջանիկ մարդիկ, որոնց բախտ էր վիճակվել լինել մի քանի տարով ավելի մեծ, քան այս չմուշկավորները և մանավանդ սահնակ քաշողները…

Եվ չմուշկավորները, բարկացած իրենցից ավելի փոքրերի վրա, ովքեր նախադպրոցական իրենց սահնակներով զբաղեցրել են փողոցի ամբողջ լանջը, բղավում են նախազգուշական բառեր և գնդակի պես սլանում ներքև, այնուամենայնիվ, ստիպված լինելով ճանապարհին անընդհատ ծռմռել իրենց իրանը, կատարել կտրուկ ոլորապտույտ և շուրջանցել հանդիպած սահնակները:

Բայց, որքան էլ որ նրանք ավելի մեծ համարեն իրենց, քան սահնակավորները, միևնույնն է, ծնողները նրանց բոլորին էլ հավասար և անխտիր անառարկելիությամբ են կանչում տուն՝ մի պահ ելնելով փողոց:

Երեխաները նորից և նորից են խնդրում ծնողներին՝ մնալ ևս մի քիչ, ևս մի քիչ... Պիտի օգտվել հազվագյուտ ձնից՝ քանի դեռ այն կա, քանի դեռ գալիս է: Վաղը առավոտյան այն կհալչի և կեղտոտ շիլայի վերածված, կհոսի թեք ու դիք փողոցներն ի վար: Եվս մի քիչ, ևս մի քիչ…

Ի՜նչ սքանչելի բան է ձյունը քաղաքում, երեկոյան, երբ քո երկու կողմում կանգնած են մեծ քաղաքի բազմահարկ ու լուսավոր շենքերը, երբ մայթերի երկայնքով, սյուներն բարձրից, վառ լուսավորում են լամպիոնների շարքերը: Ձյունը ոտքիդ տակ պսպղում է և կայծկլտում, իսկ օդը լցված է լույսով ու փաթիլներով, փաթիլներով ու լույսով... Իսկ դու տաք հագնված ես, և բոլոր քո հասակակիցները տաք հագնված են, և ձեր սահնակներն ու չմուշկները նոր են... Բայց այդ մեկը լավ չէ, որ նոր են: Նշանակում է՝ շատ քիչ են գործածվում դրանք, նշանակում է՝ շատ քիչ է գալիս ձյունը Երևանում:

Ծնողները նորից են դուրս գալիս փողոց և կանչում երեխաներին: Բացել պատուհանները կամ ելնել պատշգամբ և կանչել այդ տեղերից՝ չեն կարող, որովհետև դրանք փակված են ձմեռվա սպասումով: Եվ երեխաները, ոչ այնքան ծնողների խիստ ձայներից ազդված, որքան որ վախենալով, թե չմրսեն թեթև հագուստով փողոց ելած հայրիկներն ու մայրիկները, հառաչում են, հրաժեշտ են տալիս իրար, հրաժեշտ են տալիս ձյանը և վերադառնում բնակարանները՝ քիչ հետո երազների մեջ շարունակելու համար խոշոր և փափուկ փաթիլները, գետնի վրա ամրացած ողորկ ձյունը:

3

Որպես խաղաղ խնդություն՝

Ձյուն է գալիս, ձյուն…

Մի՞թե այլևս դատարկված փողոցների վրա է գալու այս ձյունն ամբողջ գիշեր, այս խոշոր ու փափուկ ձյունը, այս սքանչելի ձյունը…

Բայց, ոչ: Երևանի փողոցներում շարունակվում է էստաֆետը: Թվում է, թե դպրոցական հասակի երեխաները չեն վերադառնում տուն, այլ մեծանում են տեղնուտեղը, դառնում պատանիներ և երիտասարդներ, հագնում չմուշկներ, բոլորը չմուշկներ: Եվ փողոցը նորից լիքն է զվարթ կանչերով ու բացականչություններով:

Բարեկազմ տղաներ՝ բրդե գործված սվիտերներով և բրդե գործված գլխարկներով: Նրբակազմ աղջիկներ՝ բրդե գործված սվիտերներով և բրդե գործված գլխարկներով: Տարբերությունը միայն այն է, որ տղաների սվիտերներն ամբողջովին են փքվել առողջ և հպարտ կրծքավանդակներից, իսկ աղջիկներինը միայն երկու տեղով, բայց ինչպիսի՜ երկու տեղով... Եվ տարբերությունը նաև այն է, որ բրդե գործված գլխարկները երիզել են տղաների մաքուր և բարձր ճակատները, իսկ աղջիկների ճակատների վրա, իբր թե անփութորեն, իբր թե ինքնաբերաբար, դուրս են պրծել խոպոպներ՝ մերթ աջում, մերթ ձախում, մերթ ամբողջ ճակատի վրա է իջել հարթ մազերի համահավասար կտրված մի շարան՝ համարյա մինչև հոնքերը: Եվ, վերջապես, տարբերությունն այն է, որ տղաների ձեռնոցները միագույն են, իսկ աղջիկներինը՝ չալպուտ: Մնացյալ ամեն ինչում նրանք նման են իրար՝ հավասարապես գեղեցիկ մարմնակազմով ու դեմքերով, և հայ ժողովուրդը նրանց բոլորին օժտել է դարերի խորքից եկող նշաձև, շագանակագույն, խոշոր աչքերով:

Առայժմ նրանք քիչ են, բոլորը միևնույն փողոցի բնակիչներ, բարևում են իրար, համարյա բոլորը ծանոթներ են: Բայց, ահա, մոտակա հարթ փողոցներից գալիս են ուրիշ տղաներ և աղջիկներ:

Բոլորն առողջ են և բոլորն ուժեղ: Նրանք չմուշկներով սահում են ոչ միայն լանջն ի վար, այլև լանջն ի վեր:

Միայն առաջին րոպեներին է, որ նրանք սահում են միայնակ կամ երկուական՝ տղա-տղա և աղջիկ-աղջիկ: Ինչպե՞ս է տեղի ունենում՝ իրենք էլ չգիտեն, բայց քիչ հետո այլևս ոչ ոք միայնակ չէ և բոլորը սահում են զույգ-զույգ՝ տղա-աղջիկ և աղջիկ-տղա…

Ինչպես միշտ և ամեն տեղ, աղջիկներից մեկն ամենագեղեցիկն է: Շատ տղաներ են ձգտում դեպի նա, բայց աղջիկն իր բարյացակամությունը ցույց է տալիս տղաներից ամենագեղեցիկին: Գուցե և ոչ ամենագեղեցիկին, գուցե և բոլորովին հակառակը, բայց ինչպե՞ս հասկանաս սրտի թելադրանքը: Եվ մյուս տղաներն շտապում են հեռանալ գեղեցկուհուց՝ քանի դեռ ափսոսանքը չի վերածվել կսկիծի, չկայացած ծանոթությունը՝ կորուստի…

Մեկառմեկ սկսում են հանգչել պատուհանների լույսերը, բայց փողոցը դրանից չի դառնում ավելի սակավ լուսավոր: Չէ՞ որ պատուհանների լույսը լուսավորում էր միայն իրենց, իսկ փողոցը լուսավոր էր իր լապտերներով:

Իսկ ձյունը գալիս է փափուկ ու խոշոր:

Որպես խաղաղ խնդություն՝

Ձյուն է գալիս, ձյուն…

Դրանք առաջին տողերն են մի բանաստեղծության, որի հեղինակը նույնպես, այդտեղ է: Շատերն են ճանաչում նրան: Հենց այդ տողերից էլ սկսվում է նրա ծանոթությունը մի աղջկա հետ: Աղջիկն իր ընկերուհուց հենց նոր իմանալով նրա մասին, թողնում է ընկերուհուն, մոտենում է տղային, կանգնում է նրա դիմաց և առանց այլևայլության ժպտադեմ արտասանում.

Որպես խաղաղ խնդություն՝

Ձյուն է գալիս, ձյուն…

Տղան մի պահ շփոթվում է համեստությունից, հպարտությունից և նրանք այլևս սահում են երկուսով: Բացի այն, որ նա գրել է այդ բանաստեղծությունը, իսկ մյուսներն արտասանում են, մնացյալ ամեն ինչում նա և բոլոր մյուսները ոչնչով չեն տարբերվում իրարից:

Ախ, աղջիկներ, աղջիկներ, խորամանկությո՞ւնն է նախ ծնվել, թե՞ դուք: Սայթաքում են... Նույնիսկ ամենահմուտ չմուշկավորները սայթաքում են... Եվ որքան ավելի համեստ է հետի երիտասարդը, այնքան ավելի հաճախ է սայթաքում աղջիկը, մինչև որ տղան գլխի է ընկնում՝ բռնել նրա ձեռքը և միասին սահել լանջն ի վեր: Դրանից հետո աղջիկներն այլևս չեն սայթաքում: Մոռանում են: Ախ, աղջիկներ, աղջիկներ, միամտությո՞ւնն է նախ ծնվել, թե՞ դուք…

(Ախ, այս պատմվածքի հեղինակ, հեղինակ, անհասկացողությո՞ւնն է ավելի շուտ ծնվել, թե՞ դու... Աղջիկները գիտակցաբար են իսկույն ընդհատում իրենց սայթաքելը, որպեսզի հասկացնեն տղաներին, որ դա պատրվակ էր միայն՝ նրանց հետ ավելի մտերմանալու, և որպեսզի նրանք չկարծեն, թե աղջիկները վատ են սահում, և որպեսզի նրանք չերևակայեն, թե իրոք օգնում են իրենց ընկերուհիներին)…

Մի ուշացած անցորդ է գալիս ներքևից, հասնում փողոցի վերելքին և այլևս չի կարողանում գնալ առաջ: Դնում է իր մի ոտքը և երբ ուզում է դնել մյուսը, նախորդ ոտքը սահում է ետ: Նա քթի տակ խիստ խոսքեր է ասում փողոցը սպիտակ հայելու վերածած երիտասարդների հասցեին: Ինքը համարյա այլևս երիտասարդ չէ, բայց դա չէ բանը, երևում է, որ նա չի սահել նաև երիտասարդ ժամանակ:

Բանաստեղծը նայում է նրան և ցույց է տալիս նախ իր հետի աղջկան, ապա նաև մյուս երիտասարդներին:

—

Գրական քննադատ է: Ճիշտ այդպես էլ դոփում է իր տեղում նաև գրականության մեջ…

Երիտասարդները ծիծաղում են, բայց քննադատը, որը չի լսել բանաստեղծի խոսքերը, ուշադրություն չի դարձնում նրանց ծիծաղի վրա, որովհետև երիտասարդները միշտ են ծիծաղում, մի՞թե մտքիցդ կանցնի՝ դա վերագրել քեզ:

Բանաստեղծը շարունակում է.

— Իր մի հոդվածում նա մի քանի ջերմ խոսք է ասել նաև իմ «Ձյուն» բանաստեղծության մասին, այնքան ջերմ, որ ձյունը ջուր է դարձել դրանից, իսկ ջուրը՝ գոլորշի... «Հեղինակը խաղաղ խնդության պես իջնող ձյան հարցն է առաջ քաշում իր ոտանավորի մեջ»…

Երիտասարդները հռհռում են, բայց այս անգամ բանաստեղծի ընկերուհուն թվում է, թե բանաստեղծն ինքը հնարեց այդ հոդվածը, գուցե հնարեց նաև քննադատին, գուցե այդ մարդը բոլորովին էլ քննադատ չէ, այլ ոչ մի հանցանք չգործած ընթերցող…

Ծիծաղելով բանաստեղծի սրամտության վրա, աղջիկն ասում է.

— Դու իզուր չես դառնում երգիծաբան:

Բանաստեղծը մտածում է մի պահ: Իսկապես, դա լավ գաղափար է, գուցե, իրոք, դառնալ երգիծաբա՞ն: Իսկ բանաստեղծությո՞ւնը... Մի՞թե նա կկարողանա թողնել... Իսկ ինչո՞ւ թողնել: Նա կդառնա և՛ մեկը, և՛ մյուսը, և՛ դեռ էլի մի երրորդ ու չորրորդ բան: Չէ՞ որ դեռ նոր է սկսվում կյանքը, դու դեռ նոր ես սկսում գիտակցել քեզ և դեռ կարող ես դառնալ ամեն ինչ: Այսինքն, ոչ թե ամեն ինչ, այլ ամեն ինչից ինչ որ ուզենաս: Այն էլ՝ ոչ թե մի բան, այլ երկու, երեք, չորս՝ այնքան եռանդ կա քո մեջ…

Իսկ մարդը դեռ քայլ առաջ է անում իր տեղում: Երիտասարդները խմբովին մոտենում են նրան և, առանց հարցնելու, փակչելով չորս կողմից, հրում, քշում, ձգում են նրան լանջն ի վեր: Մարդը նախ զայրանում է, ուզում է նախատել, որ նրանք իրենք են փչացրել փողոցը, բայց լուռ ենթարկվում է, իսկ լանջի վերևում մինչև իսկ ժպտում: Երբ նա հեռանում է, բանաստեղծն ասում է նրա ետևից.

— Երանի գոնե մի անգամ էլ այդպես ժպտար գրականության մեջ…

Իսկ ձյունը գալիս է և գալիս, զարդարում փողոցն ու զարդարում երիտասարդներին: Նրանցից ավելի համարձակները բարձրացնում են ձեռքերը, մատով թափ են տալիս ձյունն աղջիկների խոպոպի վրայից: Իսկ աղջիկներն ուղղում են տղաների գլխարկները, կատակով վար են քաշում մինչև աչքերը, կամ, ընդհակառակը, մի քիչ ետ տանելու պատրվակով նայում են, թե ինչպիսին են նրա մազերը՝ գանգո՞ւր, թե՞ հարթ:

Բարձր ծիծաղ կամ բացականչություններ չկան: Ոչ միայն նրա համար, որ ուշ է և քաղաքը քնած է, այլև որ նրանք երեխաներ հո չե՞ն վերջապես:

— Եթե երկու տարի իրար վրա ձմեռ լինի՝ ես չեմպիոն կդառնամ,— բարձրաձայն երազում է մի երիտասարդ:— Արդեն բավական գիտեմ սահել չմուշկներով: Ճի՞շտ է: Գիտե՞մ:

— Ճիշտ է,— ամրապնդում է աղջիկը նրա մեջ ինքնավստահությունը:— Գիտես:

— Հո ամեն օր չի՞ կարելի մեկնել Սևանի կողմերը՝ մարզվելու,— բացատրում է տղան:

Եվ աղջիկը համաձայնվում է, որ չի կարելի:

— Առանց այն էլ լինում եմ ամեն կիրակի: Գուցե հաջորդ կիրակի մեկնենք քեզ հետ միասի՞ն…

Եվ աղջիկը համաձայնվում է, որ կարելի է:

Իսկ ձյունը գալիս է և գալիս է և գալիս…

Բոլոր լուսամուտներում հանգել է լույսը՝ բացի երկու լուսամուտներից, կողք-կողքի, անշուշտ, մի սենյակի պատկանող: Դա վեցերորդ հարկումն է: Թե՞ հինգերորդ: Ո՞ւմ հոգսն է՝ հաշվել հարկերը:

Երիտասարդները հագեցե՞լ են սահելուց, թե՝ ծանոթություններն են հասունացել բավականին: Ինչ էլ որ լինի, սահողներ այլևս չկան: Կանգնել են նրանք զույգ-զույգ, այս կամ այն մուտքում, ձյունով ծանրաբեռնված այս կամ այն ծառի տակ... Երբեմն, որևէ հանդուգն խոսքի պատճառով տղային պատժելու համար, աղջիկը թափահարում է ծառը և փախչում մի կողմ: Ձյունը լցվում է տղայի ծոծրակից ներս: Երբեմն աղջիկը դա անում է առանց պատճառի, տղային չարացնելու և իր ետևից լարելու համար, որպեսզի տանի նրան մի քիչ ավելի մութ տեղ: Բայց համարյա միշտ աղջիկը զղջում է իր արարքի համար, որովհետև չարացած տղան, հասնելով նրա ետևից, բռնում է նրան, ձգում դեպի իրեն, որ պատժի, և, ինքն էլ չիմանալով, թե ինչպես, համբուրում է ամուր:

Իսկ ձյունը գալիս է և գալիս: Վաղը, կեղտագույն շիլայի վերածված, այն կհոսի վար: Բայց ինչո՞ւ մտածել վաղվա մասին հիմա, այս րոպեիս, երբ լամպիոններից լուսավորված, այնպե՛ս սքանչելի գալիս է ձյունը..

Բանաստեղծն իր աղջկա հետ կանգնել է մի մուտքում՝ յուրաքանչյուրը մուտքի մի կողմից ուսը հենած, չմուշկները ոտքերին: Ապա տղան հարցնում է աղջկան.

— Ցուրտ չէ՞:

— Չեմ մրսում:

Այնուամենայնիվ, տղան հանում է նախ իր ձեռնոցները, ապա աղջկանը, և աղջկա փոքրիկ ձեռքերը, երկար մատներով, բռնում է իր թաթերի մեջ:

— Չեմ մրսում...— կմկմում է աղջիկը, առանց, սակայն, ձեռքերը քաշելու:

Գգվանքը բերում է գգվանք: Տղան աղջկա զույգ ձեռքը հավաքում է իր մի ափի մեջ, իսկ մյուսով գրկում է նրա ուսը:—

Չեմ մրսում...— կրկնում է աղջիկը՝ արդեն բոլորովին շփոթված: Իսկ մի՞թե տղան նրանից ավելի քիչ է շփոթված: Բայց և այնպես, նա շուռ է տալիս աղջկան դեմքով դեպի իրեն, խոնարհվում է դեպի նա և... և այդ ժամանակ հանկարծ վերևում բացվում է մի դուռ, ծիծաղով ու կանչերով դուրս է հորդում երիտասարդ տղաների և աղջիկների մի խումբ, սկսում է իջնել սանդուղքով:

Բանաստեղծն ու աղջիկը ետ են հրվում իրարից, ելնում են փողոց: Փողոց է դուրս գալիս նաև խումբը և միահամուռ բացականչում.

— Ձյո՛ւն…

Վաղ ժամի գալով իրենց ընկերոջ տունը՝ նրա ծննդյան տարեդարձին, նրանք մինչև հիմա չեն իմացել, թե ձյուն է գալիս դրսում: Կռանում են, ձյուն են վերցնում, դարձնում ձյունագնդիկ և խփում իրար: Միմյանց գլորում ձյան մեջ, բարձրացնում, թափ տալիս միմյանց հագուստները:

Երկար կարող էին տևել այդ գժությունները, բայց աղջիկներից մեկը դիմում է նրան, ում ծննդյան տոնն է այսօր, այսինքն՝ ոչ թե այսօր, այլ երեկ, քանի որ կեսգիշերը վաղուց է անցել.

— Գնա տուն, կմրսես, գլխաբաց ես:

Եվ խումբն շտապում է հեռանալ, որպեսզի ընկերը գնա տուն, չմրսի, նա գլխաբաց է:

Եվ տղան, որ բոլորովին էլ չի մրսում, հլու գնում է տուն՝ բավականությամբ ենթարկվելով ոչ մոր, ոչ քրոջ, այլ օտար աղջկա հոգատարությանը…

Խումբը շաղ է գալիս լանջով մեկ, բոլորն իջնում են սահելով ու վազելով, զանազան գժություններ անելով: Եվ երբ արդեն հեռու են, լսվում է նրանցից մեկի բարձր արտասանությունը.

Որպես խաղաղ խնդություն՝

Ձյուն է գալիս, ձյուն...

Աղջիկը հպարտ նայում է բանաստեղծին: Հպարտ է նաև բանաստեղծը:

Փողոցում նորից վերահաստատվում է խաղաղությունը: Բայց արդեն ուշ է, պետք է ցրվել, շուտով առավոտ կլինի: Պետք է ցրվել՝ քանի դեռ չեն հանգել այս երազային լամպիոնները, չի դադարել այս երազային ձյունը, չի ավարտվել այս սքանչելի գիշերը: Պետք է քնել գոնե մի քանի ժամ, որպեսզի, երբ արթնանաս, երազ դառնա երևանյան այս գիշերը:

— Ի՞նչ է անունդ…— հարցնում է բանաստեղծն աղջկան:

Հիմա աղջիկը կարտասանի կանացի հարյուրավոր անուններից մեկը և այդ անունը կդառնա տղայի համար ամենասիրելին, կդառնա աղջկա էության մի անբաժանելի մասը: Կդառնա այն

կախարդական բառը, որն արտասանելիս կամ մտաբերելիս տղայի աչքի առջև կկանգնի աղջիկն ինքը…

Անունների փոխանակությունից հետո տղան հարցնում է.

— Էլ ե՞րբ կհանդիպենք նորից:

— Հաջորդ ձյան ժամանակ:

Տղան ուզում է բողոքել, չէ՞ որ հաջորդ ձյունը կարող է գալ մի տարի հետո, կամ թեկուզ մի ամիս:

Բայց կարող է գալ նաև վաղը:

Ինչ էլ որ լինի, նա չի բողոքում: Նա ցնցված է աղջկա պատասխանի գեղեցկությունից: Ինչպիսի՜ երջանկություն՝ աղջկան սպասել ձյան հետ միասին, կարծես նա իջնելու է երկնքից, աստղերի աշխարհից…

Իսկ թե որտեղ պիտի հանդիպեն նրանք՝ այդ մասին չեն էլ պայմանավորվում: Իհարկե, այստեղ, այս մուտքի մոտ, որն այսուհետև ամենահարազատ կետն է նրանց համար՝ աշխարհիս երեսին:

Իսկ ձյունը գալիս է և գալիս է և գալիս է՝ խոշոր, փափուկ…

Տղան աղջկան ուղեկցում է մինչև անկյունը, այնուհետև աղջիկն ուզում է գնալ առանց տղայի, դա նրա փողոցն է:

Տղան վերադառնում է: Երջանկությունն այնպես է լցվել նրա հոգին, որ նա, չգտնելով դա արտահայտելու համար ուրիշ խոսքեր, անում է իր իսկ տողերով.

Որպես խաղաղ խնդություն՝

Ձյուն է գալիս, ձյուն…

Ինչպիսի՜ կպչուն խոսքեր կան աշխարհիս երեսին... թվում է, թե ի՞նչ մի արտակարգ բան կա այդ մի քանի հասարակ բառի մեջ.

Որպես խաղաղ խնդություն՝

Ձյուն է գալիս, ձյուն…

Բայց կրկնվում, անընդհատ կրկնվում են դրանք քո մտքում, և ամեն անգամ թվում է, թե չեն կրկնվում, այլ նոր խոսքեր են դրանք, քիչ առաջ արտասանվածների ավելի խորիմաստ, ավելի գեղեցիկ շարունակությունը…

Այ, ունենալ այդպիսի խոսքեր՝ հասարակ և կպչուն…

1967